

**Արտադրական պրակտիկայի կազմակերպումից ԵՊՀ ԻՄ ուսանողների
բավարարվածության արդյունքների /2014-15 ուստարի/**

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բակալավրական քառամյա կրթության ուսումնական պլանների կարևորագույն բաղադրատարրերից մեկը արտադրական պրակտիկան է: Այն անփոխարինելի հնարավորություն է ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքների փորձարկման, մասնագիտական հմտությունների ստուգման, դրանք կատարելագործելու տեսանկյունից: Միաժամանակ այստեղ ճշգրտվում և պլանավորվում են ավարտական աշխատանքի ուղղվածությունն ու բովանդակությունը, նախադրյալներ են ստեղծվում ինչպես հետբուհական հետագա կրթության հնարավորությունների, այնպես էլ ապագա աշխատանքային գործունեության համար:

Թե ուսանողների մասնագիտական պատրաստվածության մեջ որքանով է պրակտիկան իրացնում իր պարտավորությունները, մեծապես կախված է նրա կազմակերպման արդյունավետությունից: Այն ստուգելու, հնարավոր թերություններն ու բացթողումները վեր հանելու և հետագա կատարելագործման նպատակով ԵՊՀ ԻՄ ՄԿՊԿ բաժինը ՄԿՈԱ բաժնի հետ համատեղ 2014-15 ուս տարում մասնաճյուղի ուսանողության շրջանում անց է կացրել հարցում: Հարցմանը մասնակցել են «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության 3-րդ կուրսի, «Քարտեզագրություն և կադաստրային գործ»-ի 3-րդ կուրսի, «Կիրառական արվեստ»-ի 1-ին, 2-րդ և 3-րդ կուրսերի, ինչպես նաև «Դիզայն»-ի 1-ին կուրսի գրեթե բոլոր ուսանողները, թվով 106 ուսանող: Այսինքն հարցումը տվյալ մասնագիտությունների գծով եղել է համատարած, որի պատճառով ներկայացուցչության խնդիր չի դրվել:

Հարցաշարում ընդգրկվել են հարցեր, որոնք վերաբերվում են պրակտիկայի կազմակերպման գործընթացից, անցկացման վայրից, ժամանակահատվածից, տևողությունից, պրակտիկայի ներքին և արտաքին ղեկավարների աշխատանքներից ուսանողների բավարարվածության գնահատմանը: Առանձին հարցերով գնահատվել են նաև այն, թե որքանով է պրակտիկան նպաստել մասնագիտական կարողությունների և հմտությունների դրսևորմանը, նոր մեթոդների յուրացմանը, դրան ուղղված իրենց իսկ ուսանողների ջանքերը, ինչ չափով են արդարացել պրակտիկայից իրենց ակնկալիքները: Այդ ամենը գնահատվել է 5-բալանի սանդղակի օգնությամբ, որտեղ 5-ը՝ ամենաբարձր, իսկ 1-ը՝ ամենացածր գնահատականն է: Բերենք հարցումից ստացված արդյունքները:

Աղյուսակ 1-ում ներկայացված են բոլոր մասնագիտությունների կտրվածքով ընդհանուր տվյալները, ինչպես նաև ընդհանուր մասնաճյուղային միջինը: Ինչպես տեսնում ենք տվյալ մասնագիտությունների պրակտիկա անցած ուսանողները հիմնականում շատ բարձր են գնահատում մասնաճյուղի կողմից պրակտիկայի կազմակերպման գրեթե բոլոր բաղադրիչները, որոնք տատանվում են 4,55-4,97 միջակայքում: Ուսումնական տեղմիներով կարելի է ասել, որ ուսանողները պրակտիկայի կազմակերպումը գնահատել են «զերազանց»:

Աղյուսակ 1.

Պրակտիկային մասնակցած ուսանողների թիվը՝		31	5	12	11	17	30	106
N	Հարց	Տևու.- 3	Ք/ԿԳ	Կ/Ա- 1	Դիզ.-1	Կ/Ա-2	Կ/Ա-3	Միջ.միավ.
1	Որքանո՞վ Ձեզ բավարարեց պրակտիկայի կազմակերպման գործընթացը	4,87	4,20	5,00	5,00	4,76	5,00	4,89
2	Որքանո՞վ Ձեզ բավարարեց պրակտիկայի անցկացման վայրը	4,84	3,60	4,83	4,91	4,35	4,97	4,75
3	Որքանո՞վ է նպատակահարմար պրակտիկայի անցկացման ժամանակահատվածը	4,35	4,00	4,67	4,91	3,94	5,00	4,55
4	Որքանո՞վ է Ձեզ բավարարում պրակտիկայի տևողությունը	4,52	4,00	4,25	5,00	4,35	5,00	4,62
5	Որքանո՞վ է պրակտիկայի ծրագիրն իրականացվում	4,77	4,40	4,83	5,00	4,94	5,00	4,88
6	Որքանո՞վ Ձեզ բավարարեց ընդունող կազմակերպության աջակցությունը պրակտիկայի ընթացքում	4,65	4,20	4,83	5,00	4,29	5,00	4,73
7	Որքանո՞վ Ձեր տեսական գիտելիքները բավարարեցին ակտիվ պրակտիկայի ընթացքում	4,68	4,20	4,83	5,00	4,53	5,00	4,77
8	Որքանո՞վ պրակտիկան նպաստեց մասնագիտական կարողությունների և հմտությունների դրսևորմանը	4,65	4,20	4,67	5,00	4,65	4,97	4,75
9	Որքանո՞վ էր ուսումնառության ընթացքում յուրացրած մեթոդները նպաստում պրակտիկայի անցկացմանը	4,58	4,20	4,67	5,00	4,65	5,00	4,75
10	Որքանո՞վ պրակտիկան նպաստեց նոր մեթոդների յուրացմանը	4,65	4,20	4,83	5,00	4,47	4,97	4,78
11	Գնահատեք պրակտիկայի ղեկավարի աշխատանքները	4,94	5,00	4,92	5,00	5,00	5,00	4,97
12	Գնահատեք պրակտիկայի վայրի կողմից նշանակված ղեկավարի աշխատանքները	4,87	4,60	4,75	5,00	4,59	5,00	4,85
13	Որքա՞ն էր պրակտիկայի ղեկավարը վստահում Ձեզ	4,90	4,60	4,92	5,00	4,53	5,00	4,87
14	Գնահատեք պրակտիկայի ընթացքում նոր հմտությունների և կարողությունների ձեռք բերման Ձեր ջանքերը	4,81	3,80	4,75	5,00	4,41	5,00	4,76
15	Որքանո՞վ արդարացվեցին Ձեր ակնկալիքները պրակտիկայից	4,55	3,80	4,75	5,00	4,59	5,00	4,75
Ըստ բոլոր հարցերի միջին միավորը մասնաճյուղում՝		4,71	4,20	4,77	4,99	4,54	4,99	4,78

Հարցերին 5 միավոր գնահատած ուսանողների մասնաբաժինը							
Պրակտիկային մասնակցած ուսանողների թիվը՝		31	5	12	11	17	30
N	Հարց	Տես.- 3	Ք/ԿԳ	Կ/Ա- 1	Դիզ.-1	Կ/Ա-2	Կ/Ա-3
1	Որքանո՞վ Ձեզ բավարարեց պրակտիկայի կազմակերպման գործընթացը	87,1%	20,0%	100,0%	100,0%	82,4%	100,0%
2	Որքանո՞վ Ձեզ բավարարեց պրակտիկայի անցկացման վայրը	87,1%	40,0%	83,3%	90,9%	52,9%	96,7%
3	Որքանո՞վ է նպատակահարմար պրակտիկայի անցկացման ժամանակահատվածը	61,3%	40,0%	75,0%	90,9%	29,4%	100,0%
4	Որքանո՞վ է Ձեզ բավարարում պրակտիկայի տևողությունը	61,3%	40,0%	58,3%	100,0%	64,7%	100,0%
5	Որքանո՞վ է պրակտիկայի ծրագիրն իրականացվում	83,9%	40,0%	83,3%	100,0%	94,1%	100,0%
6	Որքանո՞վ Ձեզ բավարարեց ընդունող կազմակերպության աջակցությունը պրակտիկայի ընթացքում	74,2%	20,0%	83,3%	100,0%	64,7%	100,0%
7	Որքանո՞վ Ձեր տեսական գիտելիքները բավարարեցին ակտիվ պրակտիկայի ընթացքում	67,7%	20,0%	83,3%	100,0%	64,7%	100,0%
8	Որքանո՞վ պրակտիկան նպաստեց մասնագիտական կարողությունների և հմտությունների դրսևորմանը	74,2%	20,0%	66,7%	100,0%	64,7%	96,7%
9	Որքանո՞վ էր ուսումնառության ընթացքում յուրացրած մեթոդները նպաստում պրակտիկայի անցկացմանը	67,7%	20,0%	75,0%	100,0%	64,7%	100,0%
10	Որքանո՞վ պրակտիկան նպաստեց նոր մեթոդների յուրացմանը	80,6%	40,0%	83,3%	100,0%	58,8%	96,7%
11	Գնահատե՞ք պրակտիկայի ղեկավարի աշխատանքները	93,5%	100,0%	91,7%	100,0%	100,0%	100,0%
12	Գնահատե՞ք պրակտիկայի վայրի կողմից նշանակված ղեկավարի աշխատանքները	87,1%	60,0%	83,3%	100,0%	64,7%	100,0%
13	Որքա՞ն էր պրակտիկայի ղեկավարը վստահում Ձեզ	90,3%	60,0%	91,7%	100,0%	58,8%	100,0%
14	Գնահատե՞ք պրակտիկայի ընթացքում նոր հմտությունների և կարողությունների ձեռք բերման Ձեր ջանքերը	80,6%	20,0%	83,3%	100,0%	52,9%	100,0%
15	Որքանո՞վ արդարացվեցին Ձեր ակնկալիքները պրակտիկայից	77,4%	20,0%	83,3%	100,0%	70,6%	100,0%
Ըստ բոլոր հարցերի		78,6%	37,3%	81,7%	98,8%	65,9%	99,3%

Հարցերին 4 միավոր գնահատած ուսանողների մասնաբաժինը							
Պրակտիկային մասնակցած ուսանողների թիվը՝		31	5	12	11	17	30
N	Հարց	Տես.- 3	Ք/ԿԳ	Կ/Ա- 1	Դիզ.-1	Կ/Ա-2	Կ/Ա-3
1	Որքանո՞վ Ձեզ բավարարեց պրակտիկայի կազմակերպման գործընթացը	12,9%	80,0%	0,0%	0,0%	11,8%	0,0%
2	Որքանո՞վ Ձեզ բավարարեց պրակտիկայի անցկացման վայրը	9,7%	0,0%	16,7%	9,1%	29,4%	3,3%
3	Որքանո՞վ է նպատակահարմար պրակտիկայի անցկացման ժամանակահատվածը	19,4%	20,0%	16,7%	9,1%	47,1%	0,0%
4	Որքանո՞վ է Ձեզ բավարարում պրակտիկայի տևողությունը	29,0%	20,0%	25,0%	0,0%	17,6%	0,0%
5	Որքանո՞վ է պրակտիկայի ծրագիրն իրականացվում	9,7%	60,0%	16,7%	0,0%	5,9%	0,0%
6	Որքանո՞վ Ձեզ բավարարեց ընդունող կազմակերպության աջակցությունը պրակտիկայի ընթացքում	16,1%	80,0%	16,7%	0,0%	11,8%	0,0%
7	Որքանո՞վ Ձեր տեսական գիտելիքները բավարարեցին ակտիվ պրակտիկայի ընթացքում	32,3%	80,0%	16,7%	0,0%	23,5%	0,0%
8	Որքանո՞վ պրակտիկան նպաստեց մասնագիտական կարողությունների և հմտությունների դրսևորմանը	19,4%	80,0%	33,3%	0,0%	35,3%	3,3%
9	Որքանո՞վ էր ուսումնառության ընթացքում յուրացրած մեթոդները նպաստում պրակտիկայի անցկացմանը	22,6%	80,0%	16,7%	0,0%	35,3%	0,0%
10	Որքանո՞վ պրակտիկան նպաստեց նոր մեթոդների յուրացմանը	9,7%	40,0%	16,7%	0,0%	35,3%	3,3%
11	Գնահատե՞ք պրակտիկայի ղեկավարի աշխատանքները	6,5%	0,0%	8,3%	0,0%	0,0%	0,0%
12	Գնահատե՞ք պրակտիկայի վայրի կողմից նշանակված ղեկավարի աշխատանքները	12,9%	40,0%	8,3%	0,0%	29,4%	0,0%
13	Որքա՞ն էր պրակտիկայի ղեկավարը վստահում Ձեզ	9,7%	40,0%	8,3%	0,0%	35,3%	0,0%
14	Գնահատե՞ք պրակտիկայի ընթացքում նոր հմտությունների և կարողությունների ձեռք բերման Ձեր ջանքերը	19,4%	40,0%	8,3%	0,0%	35,3%	0,0%
15	Որքանո՞վ արդարացվեցին Ձեր ակնկալիքները պրակտիկայից	12,9%	40,0%	8,3%	0,0%	17,6%	0,0%
Ըստ բոլոր հարցերի		16,2%	46,7%	14,4%	1,2%	24,7%	0,7%

Չնայած բարձրագույն այս գնահատականին, աղյուսակ 1-ի տվյալները մանրագննին քննարկելիս կարելի է նկատել նաև հարաբերականորեն «թույլ» կետեր: Սույն առումով նկատելի են համեմատաբար ավելի ցածր գնահատականները պրակտիկայի տևողությունից և անցկացման ժամանակահատվածից, ինչպես նաև՝ «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության ուսանողների ընդհանուր ավելի ցածր գնահատականները՝ մյուսների համեմատ: Առկա են նաև առանձին բաղադրիչների գծով տարբեր մասնագիտությունների ուսանողների որոշակի «դժգոհություններ»: Այդ ամենը պահանջում է հարցման արդյունքները դիտարկել նաև յուրաքանչյուր առանձին մասնագիտության կտրվածքով:

2 և 3 աղյուսակներում բերված են յուրաքանչյուր մասնագիտության համար հարցմանը մասնակցած ուսանողների՝ պրակտիկայի կազմակերպման որոշակի բաղադրիչին տրված 5 և 4 գնահատականների հաշվեկշիռը: Կողմնորոշվելու համար բերենք մի օրինակ. «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության 31 ուսանողից պրակտիկայի անցկացման ժամանակահատվածին տված գնահատականների միջին միավորը՝ 4,35 է, ըստ որում 5 միավոր են տվել 19 ուսանող, 4-ը՝ 6 ուսանող, 3-ը՝ 4 ուսանող, իսկ 2-ը՝ 2 ուսանող: Այսինքն, տվյալ բաղադրիչի համար ընդհանուր գնահատականների մեջ 61,3 %-ը կազմում է 5 միավորի հաշվեկշիռը, 29,0%-ը՝ 4 միավորի, իսկ մյուսներինը հետևյալն են. 12,9%-ը՝ 3-ինը և 6,5%-ը՝ 2-ինը: Նույն կերպ պետք է ըմբռնել նաև բերված գնահատականները մնացած բոլոր բաղադրիչների և մասնագիտությունների համար:

Աղյուսակ 1-ից երևում է, որ հարցված 106 ուսանողների պրակտիկայի կազմակերպման բոլոր բաղադրիչների ընդհանրական միջին գնահատականը հավասար է 4,78: Սրա համեմատ երկու մասնագիտությունների համար /«Դիզայն» 1-ին կուրս և «Կիրառական արվեստ» 3-րդ կուրս/ այն գրեթե բարձրագույն արժեքն ունի՝ 4,99: Սա նշանակում է, որ ուսանողների այս հատվածի համար պրակտիկան կազմակերպվել է գրեթե իդեալականորեն, մինչդեռ, օրինակ, «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության համար գնահատականը կազմում է 4,2 միավոր, իսկ «Կիրառական արվեստ»-ի 2-րդ կուրսի համար՝ 4,54: Ընդհանուր բարձր գնահատականների ֆոնին կարծում ենք այս տվյալները պետք է արժանաան առանձին ուշադրության, առանձին բաղադրիչների ավելի մանրակրկիտ վերլուծության:

Մասնավորաբար, «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտությունից տվյալ հարցմանը մասնակցած 5 պրակտիկանտներից 1-ը պրակտիկայի վայրից բավարարվածությունը գնահատել էր «անբավարար», 2-ը՝ «բավարար» /միջին միավորը՝ 3,60/: 2 «բավարար» գնահատական են ստացել նաև պրակտիկայի անցկացման ժամանակահատվածը /միջին միավորը՝ 4,00/ ու պրակտիկայի տևողությունը /միջին միավորը՝ 4,00/: Թերևս այդ պատճառով պատահական չպետք է համարվի այն փաստը, որ գրեթե միջին գնահատական են ստացել պրակտիկայի ընթացքում նոր հմտությունների և կարողությունների ձեռքբերման անձնական ջանքերն /միջին միավորը՝ 3,80/ ու պրակտիկայից ակնկալիքների արդարացվածությունը /միջին միավորը՝ 3,80/: Ուրեմն կարելի է ասել, որ «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության պրակտիկայի անցկացման հարցում գոյություն ունեն որոշակի խնդիրներ, կապված պրակտիկայի ժամակարգի ու անցկացման վայրի հետ, որը պետք է դառնա համապատասխան ամբիոնի և պրակտիկայի պատասխանատուների ուշադրության առարկան: Լրացուցիչ վերլուծությունը պետք է ցույց տա, թե ինչ իրական հիմքեր կան նման դժգոհության համար, և, որ, ավելի կարևոր է, այն որքանով է ազդում ուսանողների ինքնադրսևորման ու ակնկալիքների ոչ լիարժեք արդարացվածության վրա: Մյուս կողմից եթե նման դժգոհությունները իրական հիմքեր ունեն, որքանով է հնարավոր բավարարելու ուսանողների պահանջները:

Թերևս նմանօրինակ դժգոհություններ են արտահայտվել նաև «Կիրառական արվեստ» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողների կողմից: Այստեղ, 17 ուսանողների կողմից կատարված գնահատականներում ամենացածր միավորը /միջինը՝ 3,94/ ստացել է պրակտիկայի անցկացման ժամանակահատվածը: Ըստ որում «անբավարար» են գնահատել 2 ուսանող, «բավարար»՝ 2-ը, «լավ»՝ 4-ը և «զերպանց» միայն 5 ուսանող: Մյուս, համեմատաբար ցածր գնահատականը /միջինը՝ 4,29/ ստացել է ընդունող կազմակերպության աջակցությունը: Այստեղ մեկ ուսանող տվյալ բաղադրիչին տվել է ողջ հարցման մեջ ամենացածր /1/ գնահատականը, 3-ը գնահատել են «բավարար»: Չնայած այստեղ 11 ուսանող ամենաբարձր գնահատականն են տվել, այդուհանդերձ, առանձին ուսանողների ցածր գնահատականը բացասաբար է անդրադարձել ընդհանուր գնահատականի վրա:

Կարծում ենք այստեղ գործոն է հանդիսանում տվյալ մասնագիտության յուրահատկությունները և այն խնդիրները, որոնք կապված են հենց այս կուրսի ուսանողների հետ: Կարևոր է և այն, որ նման դժգոհությունները ավելի քիչ են ազդել պրակտիկայից իրենց սպասելիքների արդարացման վրա /միջին միավորը՝ 4,54/: Սա ևս ազդակ է այն մասին, որ պրակտիկայի կազմակերպման պատասխանատուները պետք է պարբերաբար հետաքրքրվեն ուսանողության հետ արդյունավետ հետադարձ կապի ապահովման խնդիրներով, ավելի գործուն ուշադրություն դարձնեն նրանց անհատականության խնդիրների վրա, մի բան, որը առավել ցայտուն է դրսևորվում հենց արվեստի հետ ավելի շատ կապված անձանց մոտ:

Պրակտիկա անցած ուսանողներին հարցաշարի վերջում խնդրվել է ներկայացնել առաջարկներ, կապված պրակտիկայի գործընթացների կատարելագործման հետ: Ներկայացնենք ուշադրության արժանի մի շարք առաջարկներ, որոնք արել են նշված մասնագիտությունների պրակտիկա անցած ուսանողները, առաջարկներ, որոնց մի մասը համահունչ են նաև հարցաշարի պատասխաններից բխող ճշմարտություններին:

Այսպես, **«Քարտեզագրություն և կադաստրային գործ»** մասնագիտության ուսանողներն առաջարկում են, որ պրակտիկան ավելի երկար տևի, այն անցկացվի նորագույն տեխնոլոգիաներով, պրակտիկայի ընթացքում նոր վայրեր այցելեն, եթե հնարավոր է, այն անցկացվի կադաստրի գործակալությունում:

«Կիրառական արվեստ»-ի մասնագիտության ուսանողները համարում են, որ պրակտիկան ավելի արդյունավետ կանցնի, եթե տարածքից հաճախակի դուրս գան, էքսկուրսիաներ կազմակերպվեն, հաճախակի այցելեն արվեստի դպրոցներ, դրա համար տրամադրվի տրանսպորտ, եթե հնարավոր է, չլինի ամառային արձակուրդների հաշվին՝ այն անցկացվի աշնանը:

«Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության ուսանողները ևս ցանկանում են պրակտիկայի ավելի երկար ժամանակ, նաև՝ նախօրոք իմանան հիմնարկների պայմանները, որպեսզի ընտրելու հնարավորություն ունենան, այն կապ ունենա ավարտական աշխատանքի թեմայի հետ, իրականացրած աշխատանքի համար վարձատրվեն:

Ամփոփելով հարցաշարի հարցերին երեք մասնագիտությունների գծով պրակտիկա անցած ուսանողների պատասխանների և առաջարկությունների վերլուծությունը կարող ենք ասել, որ

- ընդհանուր առմամբ ուսանողությունը շատ բարձր է գնահատում մասնաճյուղի կողմից ուսումնա-արտադրական պրակտիկայի կազմակերպումը /գնահատման 5 միավորանոց սանդղակով ընդհանուր միջին միավորը՝ 4,78/, միաժամանակ հավաստելով, որ արդյունքում նրանք կարողացել են դրսևորել իրենց գիտելիքներն ու հմտությունները, ձեռք բերել նորերը;

- նման գնահատականի ֆոնին առանձին մասնագիտությունների գծով ուսանողներին լիարժեքորեն չի բավարարել պրակտիկայի անցկացման ժամանակացույցը, վայրը, տևողությունը, ինչը որոշ ուսանողների թույլ չի տվել ըստ արժանվույն ինքնադրսևորվելու:

Ելնելով վերոնշյալից **առաջարկվում է** հարցման արդյունքները քննարկել համապատասխան ամբիոններում, ուսումնա-մեթական վարչության հետ պարզաբանելով ուսանողների ցանկությունները բավարարելու օբյեկտիվ հնարավորությունները: Նման հնարավորությունների բացակայության, կամ սուբյեկտիվ պատճառներով թերացումների փաստը տեղեկացնել ուսանողներին, հարցը նրանց հետ դարձնելով շահախնդիր քննարկման առարկա:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին